

Կ-1180-25.02.2017-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 305-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ մասում «տասնօրյա» բառը փոխարինել «երեսնօրյա» բառով.
- 2) 3-րդ և 4-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ տուգանքը նշանակվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին Օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասերով սահմանված ժամկետները չեն լրացել:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը կամ լրացումը
1.	ՀՀ Կառավարություն	Հոդված 1.	ՎԻՎ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքի համար սահմանված տասնօրյա ժամկետի փոխարեն սահմանել երեսնօրյա ժամկետ:	Ընդունվել է :	Հոդված 1-ում կատարվել է լրացում և օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի տարաժամկետման համար սահմանված 10-օրյա ժամկետը փոխարինվել է 30 օրով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանված կարճ ժամկետը հաճախ անհարմարություններ էր առաջացնում տարաժամկետման համար քաղաքացիների կողմից դիմում ներկայացնելիս:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Գագիկ Մելիքյան	Հոդված 2.	Օրինագծում նախատեսել այն հետադարձությամբ կիրառելու կամ օրենքին հետադարձ ուժ չտալու մասին հստակ կարգավորումներ	Ընդունվել է:	Օրինագծի 2-րդ հոդվածում նախատեսվել է 2-րդ մաս, որով հստակեցվել են օրենքի գործողության սահմանները: Մասնավորապես, այն հետադարձ ուժ չի ունենա նախկինում թույլ տրված խախտումների համար

					<p>նշանակված տուգանքների համար մինչև սույն օրինագծի ուժի մեջ մտնելը հաշվարկված ավելացումների վրա:</p> <p>Միաժամանակ, օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ տուգանքը նշանակվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին Օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասերով սահմանված ժամկետները չեն լրացել: Նման մոտեցումը համահունչ է նաև ՀՀ Սահմանադրությանը: Մասնավորապես, Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը միայն ունի հետադարձ ուժ (հոդված 72), իսկ Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով (հոդված 73):</p> <p>Բացի այդ, տվյալ նորմը հետադարձությամբ կիրառելու պարագայում կարող է անհավասար մոտեցում դրսևորվել իրավախախտում</p>
--	--	--	--	--	--

					կատարած վարորդների նկատմամբ, հատկապես, մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը բարեխիղճ ձևով տուգանքի գումարները վճարած և ընդհակառակը՝ տուգանքը ժամանակին չվճարելու հետևանքով՝ ավելացումների կիրառման արդյունքում անբարեխիղճ կերպով վճարումներ չկատարող քաղաքացիների միջև:
--	--	--	--	--	---